

իսկ հայրենակիցներէն, որոնք կ'ընդդիմանան իրենց այս դադափարին, ուսած ըլլալով Լատինացոց լեզուն, թէ Յիսուս Քրիստոսի խօսքերը մանուածապատ ըրած են պարզաբանելու երեւոյթին տակ» 7) :

«Հայերը յոյներէն կը տարբերին իրենց եկեղեցական տարազներով ալ, իրենց ուրարները աւելի նեղ են եւ շուրջառները գրեթէ Լատիններուն նման» 8) :

«Հայ քահանաները (ինչպէս որ ես ակնարկեցի արդէն) կը մկրտեն՝ մանկիկը երեք անգամ տաշտիկին մէջ մխրճելով, յոյներուն սովորութեան համաձայն: Անոնցմէ (հայերէ) մեծահարուստներէն ոմանք այս արարողութիւնը կը կատարեն մեծ շուքով՝ ատիկա կատարել տալով Պատրիարքին կամ վարդապետի մը, որ համբաւաւոր է, ընկերակցութեամբ սրբազան զգեստներով զգեստաւորուած կրօնաւորներու: Եւ անոնք տաշտիկին տեղ կ'ընտրեն գետ մը կամ խորունկ աւազան մը: Եթէ գետ մըն է, այն ատեն անոնք հոն կ'երթան նաւերով՝ զարդարուած ծառի ճիւղերով եւ ծաղիկներով: Եւ Պատրիարքը մանկիկը երիցս ջուրին մէջ կը մխրճէ, որմէ վերջ կ'օծէ սուրբ իւղով (միւռոն): Արարողութիւնը այսպէս կ'աւարտի, եւ բոլոր ներկաները (մանկիկին) հօրը տունը կը վերադառնան եւ օրը լաւ ուտելով եւ խմելով կ'անցընեն»:

«Հայ քահանաները, ինչպէս նաեւ յոյներունը, թոյլատրուած են ամուսնանալ միայն մէկ անգամ, իսկ արեղաները երբեք»:

«Գալով պատարազի արարողութեանց հայոց մօտ, նաեւ հաղորդութիւն տալու կերպին, նոյնիսկ երկսեռ մանուկներու, կենսական տարբերութիւն մը չկայ իրենց եւ յունաց միջեւ: Միայն թէ՛ հայերը կը

նուիրագործեն անթթու հացը, մասամբ աւելի հաստ հոտմէական կաթոլիկներու նշխարէն, եւ բաժակին մէջ գինւոյն հետ ջուր չեն խառններ, եւ սարկաւազ ու դպիր բարձր ձայնով կը կոչեն Յիսուս Քրիստոսի մարմինը՝ երգելով «Կաց Առաջի Մեր», իրենց լեզուի ուրիշ աղօթքներով, իրար զարնելով ծնծղաններ տեսակ մը ներդաշնակութեամբ, վառուած մոմեր բռնելով, քահանային հետեւելով, մինչ ան կը կրէ հացն ու գինին խորանին շուրջ դարձող թափօրին մէջ, նախ քան զանոնք խորանին վրայ գետեղելը եւ անոնց նուիրագործութիւնը»:

«Սարկաւազները կը քշոցեն զինքը (քահանան), սակայն քշոցը ասով կը տարբերի, որ ունի քանի մը զանգակներ իր շուրջը, իբր թէ զանգաթմբիկ ըլլար: Անոնք կ'օծեն իրենց միւռոնով կամ սուրբ իւղով մեռած եկեղեցականներուն մարմինները: Յոյները ասիկա չեն կատարեր» 9) :

\* \* \*

Աղեքսանդրիոյ հայերը «ընդհանրապէս եկուորներ են, ինչպէս որ Կ. Պոլիս, սակայն աւելի քիչ թիւով: Անոնք հոն կը փոխադրեն ցամաք ճանապարհով Հնդկահաստանէն քանի մը տեսակ ապրանք, ինչպէս խաւրճիլ, գոհարեղէն, սուրճ, եւն: Այս սուրճը սովորաբար թրքական սուրճ կը կոչուի, թէեւ Սուլթանին երկիրներուն մէջ չ'աճիր, այլ արեւելեան Հնդկաստանի մէջ եւ աւելի թանկ է, որովհետեւ ցամաքի ճանապարհով Աղեքսանդրիա կը բերուի, կամ գոնէ մինչեւ Գահիրէ, ուրկէ Թուրքիա եւ քրիստոնեայ երկիրները կը տարուի: Այսպէս աւելի քիչ ժամանակ ծովի վրայ կ'ըլլայ եւ իր յատկութիւններէն նուազ չափով կը կորսընցընէ, քան թէ ուղղակի Հնդկաստանէն ծովի ճամբով բերուած տեսակը: Այսպէս, երկու տարբեր սուրճի տեսակներն ալ նոյն երկրէն կուգան, սակայն ուրիշ ճա-

7) Անդ՝ էջ 91-92:

8) Անդ՝ էջ 92:

9) Անդ՝ էջ 93: